



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան

22 05
«___» _____ 2026թ № 1467-Լ

«ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ «ԽԵԼԱՑԻ» ԱՆԱՄՆԱՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ»
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 4-ի N 1742-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի 6-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի N 369-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 26-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ

1. Սահմանել «Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության» ծրագրի շրջանակում մոնիթորինգի իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել «Տնտեսական զարգացման և ֆինանսավորման կառույց» հիմնարկի աշխատանքները համակարգող Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալին:

4. Լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ սույն հրամանը ստորագրվելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում սույն հրամանը հրապարակել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջում:

5/22/2026



ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ

Signed by: KHOJOYAN ARMAN 1507870647

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ԿԱՐԳ

«ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ «ԽԵԼԱՑԻ» ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի N 369-Լ որոշմամբ հաստատված «Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում տարեկան մոնիթորինգի իրականացման գործընթացը և դրան առնչվող իրավահարաբերությունները:
2. Սույն կարգը տարածվում է Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) «Տնտեսական զարգացման և ֆինանսավորման կառույց» հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) և Ծրագրի շահառուների վրա:
3. Մոնիթորինգն իրականացվում է Հիմնարկի կողմից տնտեսություններ այցելությունների միջոցով՝ կառուցված անկապ բոքսային պահվածքով անասնաշենքի, տեխնոլոգիական ապահովման համար անհրաժեշտ ձեռք բերված սարքերի և անասնազվխաքանակի համապատասխանությունը Ծրագրով սահմանված չափորոշիչներին և պահանջներին ստուգելու նպատակով:
4. Մոնիթորինգն իրականացվում է հետևյալ ընթացակարգով.
 - 1) Ծրագրի շրջանակում տարեկան մոնիթորինգն իրականացնում է Հիմնարկը՝ Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման վարչության (այսուհետ՝ Վարչության) կողմից գլխավոր քարտուղարի պաշտոնական գրությամբ շահագործման հանձնված անասնաշենքերի վերաբերյալ ներկայացված

փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո: Տարեկան մոնիթորինգի արդյունքում կազմվում է արձանագրություն՝ համաձայն N 1 Ձևի:

- 2) Յուրաքանչյուր մոնիթորինգի ավարտին՝ տեղում կազմվում է արձանագրություն (թղթային կամ էլեկտրոնային տարբերակով)՝ համապատասխանում է / չի համապատասխանում Ծրագրի չափորոշիչներին եզրակացությամբ (կից լուսանկարներով)՝ հաշվի առնելով շահառուի կողմից մասնակցության դիմումի ներկայացման պահին Ծրագրի գործող դրույթները: Արձանագրությունը կազմվում է գրավոր (թղթային կամ էլեկտրոնային տարբերակով)՝ համապատասխան ձևաթղթով:
- 3) Մոնիթորինգի ընթացքում շահառուից կարող է պահանջվել լրացուցիչ տեղեկատվություն՝ փաստաթղթերի, լուսանկարների կամ տեսաժապավենների տեսքով:
- 4) Յուրաքանչյուր մոնիթորինգի արդյունքում կազմված արձանագրությունը փոխանցվում է Վարչությանը՝ գործի համապատասխան ընթացքն ապահովելու նպատակով:
5. Շահառուի կողմից մոնիթորինգի իրականացմանը խոչընդոտելը (չապահովելը)՝ կղիտարկվի որպես Ծրագրի պայմանների խախտում և հիմք է մոնիթորինգի իրականացման անհնարինության վերաբերյալ արձանագրություն կազմելու համար: Արձանագրությունը մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է Նախարարություն համապատասխան ընթացք տալու նպատակով:
6. Անհրաժեշտության դեպքում Նախարարության նախաձեռնությամբ Հիմնարկը կարող է շահառուի տնտեսությունում իրականացնել կրկնակի տարեկան մոնիթորինգ՝ սույն կարգի 4-րդ կետով սահմանված ընթացակարգով:

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում տարեկան մոնիթորինգի¹

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության «Տնտեսական զարգացման և ֆինանսավորման կառույց» հիմնարկի մոնիթորինգի բաժնի (այսուհետ՝ Բաժին) կողմից Ծրագրի շահառու _____-ի (այսուհետ՝ Շահառու) _____ մարզի _____ համայնքի _____ բնակավայրում բնակավայրում գտնվող _____ տնտեսությունում իրականացված մոնիթորինգի ընթացքում արձանագրվել է, որ Էկոնոմիկայի նախարարության և Շահառուի միջև _____ 20____թ.-ին կնքված N _____- _____ Պայմանագրի համաձայն _____ գլուխ ԽԵԿ-ի համար կառուցված/վերակառուցված², շահագործման հանձնված անասնաշենքի կարգավիճակի, անասնազվիսաքանակի և պահվածքի վերաբերյալ սույն արձանագրությունը:

1. Անկապ բոքսային պահվածքով անասնաշենքի չափորոշիչների գնահատում՝ համաձայն Ծրագրի N4 Աղյուսակի

Անվանումը	Ծրագրով նախատեսված նորմատիվային ցուցանիշ, ծանոթություններ	Իրական ցուցանիշների համապատասխանություն (համապատասխանում է կամ չի համապատասխանում)	Մեկնաբանություն
Օդափոխություն	Երդիկների ընդհանուր մակերեսը պետք է լինի տանիքի մակերեսի 2.5 % և ավելի		
Տանիքի գագաթի բարձրությունը	Նվազագույնը 6.0 մ		
Նստելատեղեր	<p>Լայնությունը՝ նվազագույնը 90, առավելագույնը 120 սմ, (միջինում 100 սմ), երկարությունը՝ նվազագույնը 180, առավելագույնը 220 սմ, (միջինում 200 սմ), նստելատեղերը պետք է միմյանցից առանձնացված լինեն մետաղյա բաժանարար կոնստրուկցիաներով</p> <p>Ծանոթություն. մեդաղյա բաժանարար կոնստրուկցիաները</p>		

¹ Տարածքի տեղազննություն, անկապ բոքսային պահվածքով անասնաշենքի չափորոշիչների, տեխնոլոգիական ապահովման նպատակով ձեռքբերված և տեղադրված սարքերի առկայության, անասնաշենքի կարգավիճակի, անասնազվիսաքանակի և պահվածքի գնահատում, լուսանկարում:
² Ընդգծել տարբերակներից մեկը:

	պետք է պատրաստված լինեն 2 դյույմ տրամագծով մետաղյա խողովակներով, չունենան սուր անկյուններ, դիմային մասն ունենա կորություն(ներ), վերին մասից միմյանց ամրացվող ուղղորդող խողովակները լինեն շարժական		
Սալիկապատված կթի սրահ՝ ջրահեռացման համակարգով	ԽԵԿ-երին ուղղորդող, զսպող արգելապատնեշների առկայություն Ծանոթություն. սառը և տաք ջրի առկայություն ³		
Կերահրապարակ	Մեկ գլխի հաշվով նվազագույն լայնությունը՝ 70 սմ Ծանոթություն. կերի սեղանի ամբողջ երկայնքով 50-70 սմ լայնությամբ մակերեսը պետք է լինի փայլատ սալիկով կամ պրես գրանիտով պատված		
ԽԵԿ-երի համար նախատեսված տարածքը	Մեկ գլխի համար 8-9 քառ. մ, ներառյալ՝ բոքսեր		
Զբոսատեղերի լայնությունը	2,65 - 4,0 մետր Ծանոթություն. անասնաշենքի ներսում		

2. Անասնաշենքի տեխնոլոգիական ապահովվածության կարգավիճակի գնահատում՝ համաձայն Ծրագրի N5 Աղյուսակի

Անասնաշենքի տեխնոլոգիական ապահովման համար ա նհրաժեշտ սարքերը	1. 1-ին մոդելի համար ա նհրաժեշտ քանակ	2. 2-րդ մոդելի համար ա նհրաժեշտ քանակ	3. 3-րդ մոդելի համար ա նհրաժեշտ քանակ	Իրական ցուցանիշների համապատասխանություն (համապատասխանում է կամ չի համապատասխանում)	Մեկնաբանություն
Քամհար (յուրաքանչյուրը՝ 6000-12000 մ ³ /ժ հզորությամբ)	4/6 (24000-48000 մ ³ /ժ)	6/8/10 (36000-72000 մ ³ /ժ)	10 և ավելի ⁴ (60000 մ ³ /ժ և ավելի)		
Էներգախնայող (LED) լամպեր լուսավորության համար	10-20	20-34	34 և ավելի		

³ Կթի սրահում տաք և սառը ջրով ապահովվածությունը ստուգվելու է ավարտական 2-րդ փուլի տեղազննության ժամանակ՝ պայմանավորված սարք-սարքավորումների տեղադրմամբ:

⁴ Յուրաքանչյուր 100 քառ. մետրի հաշվով՝ 2 քամհար

Անասնաշենքի տեխնոլոգիական ապահովման համար անհրաժեշտ սարքերը	1. 1-ին մոդելի համար անհրաժեշտ քանակ	2. 2-րդ մոդելի համար անհրաժեշտ քանակ	3. 3-րդ մոդելի համար անհրաժեշտ քանակ	Իրական ցուցանիշների համապատասխանություն (համապատասխանում է կամ չի համապատասխանում)	Մեկնաբանություն
(յուրաքանչյուրը՝ առնվազն 35 վատտ)					
Կթի շարժական սարքավորում ⁵	1	0	0		
Կթի ստացիոնար համակարգ ⁶	0	1	1		
Կենդանիների համար նախատեսված ռետինե ներքնակներ	10-15	20-25	40-45 և ավելի		
Ջրի արևային տաքացուցիչ կթի սենյակի համար ⁷	1	1	1		
Անասնաշենքից գոմաղբի հեռացման սարք-սարքավորում (մոտոբլոկ, մինի տրակտոր, ավտոմատ կառավարմամբ շղթայաքերիչ և այլն)	0	1	1		
Կենդանիների խոզանակ	0	0	1		
Կաթի պաղեցման տարա (առնվազն 600 լ տարողությամբ), որը պետք է ունենա սառեցնող (սառնարանային) սարք, խառնիչ, ջերմաչափ, իսկ ներքին բաքը և կաթի հետ շփվող բոլոր մոնտաժված մասերը պետք է պատրաստված լինեն չժանգոտվող մետաղից	0	0	1		
Խմբային տաքացնող ջրախմոց	1	1	1		

⁵ Կարող է լինել նաև կթի ստացիոնար համակարգ

⁶ Նվազագույնը 4 ԽԵԿ միաժամանակ կթելու հնարավորությամբ

⁷ Ներառյալ՝ կթի սրահում տաք և սառը ջրի առկայությունը

3. Անասնաշենքում պահվող հեՄ-երի վերաբերյալ տեղեկատվություն

3.1 Անասնաշենքում պահվող հեՄ-ի ցեղ	3.2 հեՄ-ի քանակ (գլուխ)	3.3 Մեկ հեՄ-ի միջին օրական կաթնատվություն (չափողականությունը՝ կգ/օր) (խելացի անասնաշենքում անկապ բոքսային պահվածքի պայմաններում)	3.4 Մեկ հեՄ-ի միջին օրական կաթնատվություն (չափողականությունը՝ կգ/օր) (ավանդական պահվածքի պայմաններում) <i>(Լրացնել, եթե նախկինում՝ մինչև խելացի անասնաշենքի կառուցումը, նշված ցեղի հեՄ-եր պահվել են)</i>

4. հեՄ-երի պահվածքի վերաբերյալ տեղեկատվություն

4.1 հեՄ-երի պահվածքը անասնաշենքում	<ul style="list-style-type: none"> ▪ Անկապ բոքսային պահվածք ▪ Կապովի պահվածք ▪ Ե՛վ անկապ, և՛ կապովի պահվածք
4.2 Համարակալված են հեՄ-երը	<ul style="list-style-type: none"> ▪ Այո, բոլորը ▪ Որոշները ▪ Ոչ
4.3 Վարո՞ւմ եք գրանցամատյան	<ul style="list-style-type: none"> ▪ Այո ▪ Ոչ
4.4 Օգտվո՞ւմ եք հեՄ-երի արհեստական սերմնավորման ծառայություններից	<ul style="list-style-type: none"> ▪ Այո ▪ Ոչ
4.5 Օգտվո՞ւմ եք մասնավոր անասնաբուժական ծառայություններից	<ul style="list-style-type: none"> ▪ Այո ▪ Ոչ
4.6 Ձեր տնտեսությունում իրականացվե՞լ են ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող անասնաբուժական կանխարգելիչ և ավստորոշիչ	<ul style="list-style-type: none"> ▪ Այո ▪ Ոչ

միջոցառումները	
4.6.1 Եթե չեն իրականացվել կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումները, նշել պատճառ(ներ)ը. _____ _____	
4.7 Որքանո՞վ եք կիրառում Ծրագրի շրջանակում իրականացված դասընթացի ընթացքում ստացած գիտելիքները	<ul style="list-style-type: none"> ▪ Կիրառում եմ ամբողջությամբ ▪ Մասամբ եմ կիրառում ▪ Չեմ կիրառում ▪ Այլ _____
4.8 Որքանո՞վ եք բավարարված Ծրագրի պայմաններից	<ul style="list-style-type: none"> ▪ Լիովին բավարարված եմ ▪ Մասամբ բավարարված եմ ▪ Մասամբ բավարարված չեմ ▪ Ընդհանրապես բավարարված չեմ ▪ Դժվարանում եմ պատասխանել

Մոնիթորինգի իրականացման ժամանակ հաշվի են առնվել Շահառուի կողմից մասնակցության դիմումի ներկայացման պահին Ծրագրի գործող դրույթները՝

Լրացուցիչ տեղեկատվություն

Եզրակացություն

- Համապատասխանում է Ծրագրի չափորոշիչներին
- Չի համապատասխանում Ծրագրի չափորոշիչներին , քանի որ _____

Շահառուի կարծիք (մասնավորապես անհամաձայնության վերաբերյալ)՝ _____

Առդիր՝ Մոնիթորինգի _____ լուսանկար:

Շահառու՝ _____, _____
 (անուն, ազգանուն, անձնագրի կամ նույնականացման քարտի համար կամ ՀՎՀՀ) (ստորագրություն)

Մոնիթորինգ իրականացնող (ներ)՝ _____, _____
 (պաշտոն, անուն, ազգանուն) (ստորագրություն)

_____, _____
 (պաշտոն, անուն, ազգանուն) (ստորագրություն)

_____, _____
 (պաշտոն, անուն, ազգանուն) (ստորագրություն)

Բաժնի պետ՝ _____, _____
 (անուն, ազգանուն) (ստորագրություն)

Տնօրեն՝ _____, _____
 (անուն, ազգանուն) (Կ.Տ ստորագրություն)